ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի N431-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«___» ___ 2025 թվականի N – Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի N431-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1.Կառավարության 2019 թվականի ապրիլի 11-ի «Հայաստանի Հանրապետության ցամաքային տարածքի ծածկույթի դասակարգման կարգը հաստատելու մասին» N431-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգում կատարել հետևյալ լրացումները.

1) 2-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1 կետով.

«2.1 Հայաստանի Հանրապետության ցամաքային տարածքի ծածկույթի դասակարգման վերաբերյալ տարածական տեղեկատվության կիրառման նպատակով, ցամաքային տարածքի ծածկույթի քարտեզագրական շերտերի կազմման և ազգային գեոպորտալին ինտեգրման համար, համաձայն հաստատված ՀՍՏ451-2024 «Ցամաքային տարածքի ծածկույթի» ազգային ստանդարտի՝ ստեղծվում են համապատասխան թեմատիկ քարտեզագրական շերտեր։ Թեմատիկ քարտեզագրական շերտերը ստեղծվում և թարմացվում են 5 տարին մեկ»։

2) 13-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 13.1 կետով.

«Համայնքի ղեկավարը ստեղծում է 2.1 կետով սահմանված թեմատիկ քարտեզագրական շերտերը և ներկայացնում համապատասխան մարզպետին (բացառությամբ Երևան քաղաքի)։»։

3) 14-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 14.1 կետով.

«Մարզպետն ամփոփում է համայնքների ղեկավարների ներկայացրած թեմատիկ քարտեզագրական շերտերը, իսկ Երևանի քաղաքապետը ստեղծում է Երևան քաղաքի ցամաքային տարածքի ծածկույթի թեմատիկ քարտեզագրական շերտերը և ներկայացնում են շրջակա միջավայրի նախարարություն։»։

4) 15-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 15.1 կետով.

«15.1 Թեմատիկ քարտեզագրական շերտերի առկայության դեպքում շրջակա միջավայրի նախարարությունն ամփոփում և վերլուծում է Հայաստանի Հանրապետության ցամաքային տարածքի ծածկույթի դասակարգման վերաբերյալ տարածական տեղեկատվությունը և ինտեգրում ազգային գեոպորտալին։»

։2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։